

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 24/11

Քաղ. Երևան

23 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մարտի 23-ի նիստում (արձանագրություն N3/15) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից 2011թ. փետրվարի 21-ին «ՊՏԱՍԻԿԱ ԾԻՏԻԿ» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը:

Դիմումումին կից ներկայացված են տեղեկություններ «ՊՏԱՍԻԿԱ ԾԻՏԻԿ» ապրանքային նշանի օգտագործման և գովազդի մասին տեղեկություններ, ինչպես նաև «ՊՏԱՍԻԿԱ ԾԻՏԻԿ» ապրանքային նշանով մակնշված ապրանքի իրացման ցանցի մասին:

Կոլեգիայի քննարկման արդյունքների ներկայացման ժամանակ նշվեց, որ դիմողի կողմից ներկայացվել են մի շարք փաստարկներ հիշյալ ապրանքային նշանների հանրահայտության ճանաչման մասին, նշվեց նաև, որ 01.01.2009 թվականից «ՊՏԱՍԻԿԱ ԾԻՏԻԿ» ապրանքային նշանով մակնշված 162175 կգ քանակով կոնֆետներ են իրացվել սպառման շուկայում (ք.Երևանի շուրջ 2400 խանութներում և մարզերի 4000 խանութներում), որը վկայում է նշված ապրանքային նշանի հանրահայտ լինելու մասին: Նշվեց նաև, որ վերը նշված ապրանքային նշանը գովազդվել է տարբեր հեռուստաընկերությունների կողմից բավականաչափ եթերաժամով, ինչը նույնպես խոսում է հանրության լայն շրջանակում դրա հայտնի լինելու հնարավորության մասին:

Ներկայացված փաստարկները համոզիչ էին բողոքարկման խորհրդի համար, քանի որ հիշյալ ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է

ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության լայն շրջանակների համար կոնֆետների ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածիով ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման «Կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետով և «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի դրույթներով

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի 2011թ. փետրվարի 21-ի դիմումը եւ «ПТАШКА ԾԻՏԻԿ» բառային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱԾՄԴ 30-րդ դասի «կոնֆետներ» ապրանքների համար:

1. Որոշման կայացման թվականը 23.03.2011
2. Հանրահայտ ապրանքային նշանի 40 գրանցման համարը
3. Հանրահայտ ապրանքային նշանի «ПТАШКА ԾԻՏԻԿ» անունը
4. Թվականը, որից սկսված ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվում ՀՀ-ում 2009
5. Հանրահայտ ապրանքային նշանի «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ սեփականատիրոջ անվանումը եւ ՍՊԸ գտնվելու վայրը հասցեն 0061 ք. Երևան, Մասիսի փ.31
6. Ապրանքների եւ ծառայությունների ԱԾՄԴ 30-րդ դասի

Միջազգային դասակարգման դա- «Կոնֆետներ» ապրանքների համար
սերին համապատասխան խմբա-
վորված այն ապրանքների եւ ծա-
ռայությունների ցանկը, որոնց նկատ-
մամբ ապրանքային նշանը ճանաչվել
է հանրահայտ

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան